Հայտարարություն

Քա՛յլ արա ընդդեմ ավտորիտար կառավարման հաստատմանը

Լայնածավալ և կազմակերպված կեղծիքներով, ընտրողների ազատ կամքի և իրավունքների զանգվածային սահմանափակումներով և ոտնահարումներով, համատարած ընտրակաշառքի և վարչական ռեսուրսների շարունակական չարաշահման միջոցով 2015թ. դեկտեմբերի հանրաքվեով պարտադրված Սահմանադրական փոփոխությունների, նույն մեթոդների կիրառման արդյունքում 2017թ. ապրիլին ձևավորված ՀՀ Ազգային ժողովում ձեռք բերելով մեծամասնություն՝ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը զավթեց իշխանությունը, իսկ ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանը 2018. ապրիլի 17-ին երրորդ անգամ անընդմեջ որոշեց ղեկավարել պետությունը:

Նախորդ տասը տարիների ընթացքում ՀՀ նախագահի պաշտոնում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետությունից անվերադարձ արտագաղթել է 350,000-ից ավել մարդ, ՀՀ բնակչության շուրջ 30 տոկոսը շարունակում է մնալ աղքատ, շարունակական բնույթ են ունեցել մարդու իրավունքների խախտումները, քաղաքական հետապնդումներն ու բանտարկությունները, համակարգային կոռուպցիան մնում է որպես կառավարման հիմնական մեխանիզմ, որի հետևանքով 2016թ. ապրիլյան պատերազմական գործողությունների ընթացքում զոհվեցին հարյուրից ավել երիտասարդներ:

Հայաստանի Հանրապետությունում իշխում է անպատժելիության, այլ ոչ թե իրավունքի գերակայության սկզբունքը:

Առաջնորդվելով այն համոզմունքով, որ քաղաքացիներն, իրացնելով սահմանադրությամբ իրենց պատկանող իշխանությունը, ցանկացած ժամանակ իրավունք ունեն ոտքի կանգնել ոչ ժողովրդավարական գործընթացների դեմ՝ մեր աջակցությունն ենք հայտնում այս օրերին Երևանում և Հայաստանի Հանրապետության տարբեր քաղաքներում տեղի ունեցող քաղաքացիական անհնազանդության շարժմանը և բողոքի ցույցերին:

Մենք՝ ներքոստագրյալ հասարակական կազմակերպություններս և գործիչներս, գտնում ենք, որ անթույլատրելի է Սերժ Սարգսյանի կողմից վարչապետի պաշտոնի ստանձնումը և երրորդ անգամ անընդմեջ նրա կողմից պետության ղեկավարումը:

2018թ. ապրիլի 21

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

«Տրտու» հասարակական կազմակերպություն

Իրավունքի ուժ իրավապաշտպան հասարակական կազմակերպություն

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» հասարակական կազմակերպություն

Հայ Առաջադեմ Երիտասարդություն ՀԿ

Թրանսփարենսի Ինթերնեշնլ ՀԿ

«Տեղական Ժողովրդավարության Գրասենյակ» հիմնադրամ

Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ

«Թիմ Ռեսուրս» քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոն ՀԿ-

«Խազեր» էկոլոգամշակութային ՀԿ

"Սպիտակի Հելսինկյան Խումբ" իրավապաշտպան ՀԿ

Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության անալիտիկ կենտրոն

«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ

Իմ իրավապաշտպանը ՀԿ

Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ /Փինք Արմենիա

Նոր Սերունդ Մարդասիրական ՀԿ

Կանանց ռեսուրսային կենտրոն

Քալրֆուլ Հաուս" Սոցիալ-մշակութային և իրավապաշտպան ՀԿ

Սպառողների խորհրդատվության կենտրոն ՀԿ

"Ազատ քաղաքացի" քաղաքացիական նախաձեռնությունների աջակցման կենտրոն

Զարուհի Հովհաննիսյան-իրավապաշտպան

«Շողեր միություն» ՀԿ

Արմավիրի զարգացման կենտրոն ՀԿ

Հանրային օրակարգ" ՀԿ

MIND հկ-ն և

Առողջապահություն և աշխատանք>> ՀԿ

«ՄԵՆՔ» Լոռու մարզի երիտասարդական ՀԿ

Վելես իրավապաշտպան ՀԿ

Աստղացոլք ՀԿ

Մարտունու կանանց համայնքային խորհուրդ ՀԿ

Հանուն հավասար իրավունքների ՀԿ

Ազգային ջրային համագործակցություն ՀԿ

Գալստյան Նարինե, ուսանող

Կանանց ֆորում ՀԿ

Ֆերմերային շարժում ՀԿ

Էկոտուրիզմի ասոցացիա